ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» 11 2012թ. N: 306-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՅԿԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Վարդան Սարգսյանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2012 թվականի նոյեմբերի 27-ից զբաղեցրած պաշտոնից ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Վարդան Սարգսյանին:

2. 2012 թվականի նոյեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Վարդան Սարգսյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսրայելյանի հետ ճիշտ է՝